ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայր Աթոռում, վերջին մի քանի տարիների ընթացքում, ավանդություն է դարձել մարտ ամսում հրավիրել ներքին թեմերի առաջնորդների, թեմական և եկեղեցական խորհուրդների ժողով, տնտեսական ընթացիկ տարվա առթիվ։

Այս տարի էլ, մարտի 23—24-ին, չորեքշաբթի և հինգշաբթի օրերին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Մայր Աթոռում գումարվեց ներքին թեմերի խորհրդակցական ժողովը, որին մասնակցում էին՝

1. Մայր Աթոռից՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը, վերստուգիչ հանձնաժողովը, Մայր Աթոռի միաբանությունը, «էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, Մայր Աթոռի ֆինանսական և տնտեսական բաժինների ղեկավարները, դիվանապետը, գլխավոր ճարտարապետը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը։

2. Արարատյան թեմից՝ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոսը, թեմական խորհրդի անդամներ արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Անդրեասյանը, Սուրեն Արևշատյանը, Զավեն Աղասյանը, Պարգև Շահբազյանը, արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանը և Գեղարդի վանքի վանահայր արժանապատիվ Տ. Վաղարշակ քահանա Բղումյանը։

3. Շիրակի թեմից՝ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոսը, թեմական խորհրդի անդամներ արժանապատիվ Տ. Արամ քահանա Բոյաջյանը, արժանապատիվ Տ. Վազգեն քահանա Ղարագյոզյանը (Կիրովական), Գրիգոր Էդիլյանը։

4. Վրաստանի հայոց թեմից՝ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, թեմական խորհրդի անդամներ արժանապատիվ Տ. Վարդան քահանա Թադեոսյանը, գրող Սուրեն Ավչյանը, Գ. Դուրգարյանը, Սամվել Թառխանյանը, արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը (Ախալցխա), հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուչյանը (Ախալքալակ)։

5. Ադրբեջանի հայոց թեմից՝ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը, թեմականի անդամներ Անդրանիկ Կահրամանյանը, Սարգիս Բաղդասարյանը և Արշավիր Տեր-Պետրոսյանը (Կիրովաբադ).

6. Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմից՝ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոսը, թեմական խորհրդի անդամներ Զաքար Ասատրյանը



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ, ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՎ։

(Մոսկվա), Եղիազար Բաբայանը (Ռոստով), Սարգիս Մելքումյանը (Օրջոնիկիձե)։

Մարտի 23-ին, չորեքշաբթի առավոտյան ժամը 8.30-ին, թեմական առաջնորդներն ու պատգամավորները և խորհրդակցության բոլոր մասնակիցները Մայր Տաճարում ներկա եղան Արևագալի արարողության։

Հանդիսավոր ժամերգության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Ժամը 11-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետը բարեհաճեց ըստ թեմերի ընդունել առաջնորդներին և թեմական խորհրդի անդամներին՝ զրուցելու համար թեմերի ներքին եկեղեցական, վարչական, տնտեսական և այլ հարցերի շուրջ։

Առավոտյան ժամը 11-ից մինչև հետմիջօրեի ժամը 3-ը տեղի ունեցավ թեմերի 1965 թվականի բյուջեի կատարողականի և 1966 թվականի նոր բյուջեի նախահաշիվների առանձին-առանձին քննությունը։

Երեկոյան ժամը 6-ին, Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, պաշտվեց «Խաղաղական»-ի և «Եկեսցէ»-ի հանդիսավոր ժամերգությունը, որին ներկա եղան նաև թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, թեմական խորհուրդների անդամները և ժողովի բոլոր մասնակիցները։

Արարողության ընթացքում լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը քարոզեց «Տէր, բազումք են նեղիչք իմ» բնաբանով, ծանրանալով մեծ պահքի խորհրդի վրա և շեշտելով աղոթքի և ապաշխարության կարևորությունը։ Քարոզի վերջում Տ. Հուսիկ եպիսկոպոսը, հանուն Հայոց Հայրապետի, ողջունեց Մայր Աթոռ ժամանած թեմական առաջնորդներին, թեմական խորհրդի անդամներին և ժողովի բոլոր մասնակիցներին։

Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Վեհարանում, գումարվեց ներքին թեմերի խորհրդակցական ժողովի առաջին նիստը։

Ժողովը բացվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով։ Նորին Ս. Օծությունը ջերմորեն ողջունելով բոլոր եկեղեցական և աշխարհական պատգամավորների ներկայությունը, հաջողություն մաղթեց ժողովի աշխատանքներին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը զրույցի ձևով ժողովականներին ծանոթացրեց ներքին և Սփյուռքի թեմերի եկեղեցական կյանքին կապված կարևոր հարցերին։

Զրույցը, որ տևեց մոտ երկու ժամ, անցավ շատ հուզիչ և ոգևորիչ մթնոլորտում։

Մարտի 2-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց լուսանկարվել պատգամավորների և Մայր Աթոռի բոլոր աշխատավորների հետ։

Ժամը 12-ին, Վեհարանում, Նորին Ս. Օծության նախագահության տակ, գումարվեց ժողովի երկրորդ նիստը։

Վեհափառ Հայրապետը «Հոգւոց» արտասանեց հանգուցյալ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի և Վրաստանի հայոց թեմական խորհրդի անդամ, հանգուցյալ Խնդիր Դիլաբյանի հիշատակին։

Այնուհետև Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ և գլխավոր հաշվապահ Գառնիկ Քեհյայանը ժողովին ներկայացրեց, ըստ թեմերի և զլուխ առ գլուխ, 1965 թվականի Մայր Աթոռի և ներքին թեմերի բյուջեների կատարողականը և 1966 թվականի նոր բյուջեների նախահաշիվները։

Կատարողականի և նոր բյուջեի նախահաշիվների շուրջ կատարվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին առաջնորդները, թեմական խորհուրդների անդամներ և ներկաներից շատերը։

Յուրաքանչյուր թեմի կատարողականի քննարկումից հետո, Վեհափառ Հայրապետը ամփոփեց արդյունքները, հայտնելով Իր գոհունակությունն ու օրհնությունը թեմում կատարված տնտեսական աշխատանքների բարի արդյունքների և կանոնավորության մասին, անելով նաև մի շարք կարևոր դիտողություններ հաջորդ տնտեսական նոր տարվա առթիվ։

Ժամը 3-ին, ներքին թեմերի խորհրդակցական ժողովն ավարտեց իր աշխատանքները։

Ժողովը փակվեց միաբերան երգված տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ։

Ժամը 3.30-ին, Վեհարանի սեղանատանը, Նորին Ս. Օծությունը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել թեմական առաջնորդներին, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներին, Մայր Աթոռի միաբաններին և բոլոր ժողովականներին, շուրջ 55 հոգու։

Սեղանների շուրջ ստեղծվեց վանական ջերմ մթնոլորտ։ Բաժակներ առաջարկվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության համար, Հայոց Հայրապետի կենաց և Հայ Եկեղեցու պայծառության համար։

Ելույթ ունեցան Տ. Կոմիտաս, Տ. Պարգև եպիսկոպոսները, Տ. Ներսես, Տ. Արսեն, Տ. Նարեկ վարդապետները, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ դոկտ.-պրոֆ. Ա. Առաքելյանը, Գ. Բեքմեզյանը, արժանապատիվ Տ. Վազգեն, Տ. Վաղարշակ, Տ. Հովհաննես քահանա հայրերը, թեմական խորհուրդների անդամներ Ս. Արևշատյանը (Երևան), Ս. Ավշյանը (Թբիլիսի), Ե. Բաբայանը (Ռոստով), Ա. Կահրամանյանը (Բաքու), Գ. Ադիլյանը (Լենինական), Ա. Տեր-Պետրոսյանը (Կիրովաբադ), «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, Հոգևոր Ճեմարանի դասախոս Ս. Անթոսյանը։

Ընդունելության վերջում խմբովին երգվեց Տերունական աղոթքը և Վեհափառ Հայրապետը տվեց Իր օրհնությունները։

Երեկոյան ժամը 8-ին, Երևանում, Սպենդիարյանի անվան պետական օպերայում, բոլոր պատգամավորները ներկա եղան ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանի լիրիկական երգերից կազմված համերգին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ, ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ, ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅԱՄԲ։